ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ԳԱՅԱՆԵ ԽԱՉԻԿԻ

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1946–1953 ԹԹ.)

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2025

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խաչատրյան Կարեն Համլետի

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մանուկյան Արմենակ Սարիբեկի

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ալեքսանյան Հովհաննես Ստյոպայի

Առաջատար կազմակերպություն՝ Խաչատուր Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2025 թ. հուլիսի 14-ին, ժամը 13^{00}-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲԿԳԿ Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թ. հունիսի 14-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պ.գ.թ., դոցենտ Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Աշխարհով մեկ սփռված հայության համար Հայաստանի Հանրապետություն վերադառնալու հնարավորությունների ստեղծումը և պատշաճ ընդունումը պետության կարևորագույն և առաջնային խնդիրներից է: Հատկապես կարևոր է հայրենադարձների արդյունավետ ինտեգրման և ակտիվ ներգրավման գործընթացը երկրի հասարակական-քաղաքական, մշակութային ու սոցիալ-տնտեսական կյանքին: Այս գործում էական աշխատանք է կատարում ՀՀ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը: Վերջինիս Հայրենադարձության և ինտեգրման կենտրոնը իրականացնում է բազմաթիվ ծրագրեր, որպեսզի դյուրացնի հայրենադարձների ներգրավումը հայաստանյան իրականությանը: Այնումենայնիվ, հայրենադարձության կազմակերպման և իրականացման խնդրում կան բազմաթիվ խնդիրներ, որոնք կապված են թե՛ պետության կողմից վարվող քաղաքականության, թե՛ ռեսուրսների քանակի, թե՛ հայրենադարձության բնույթի և թե՛ հասարակության վերաբերմունքի ու ինտեգրման առաջնահերթությունների հետ: Ուստի հայաստանյան հայրենադարձության պատմական փորձի հետազոտությունը արդիական խնդիր է: Ասվածն առավել քան վերաբերվում է Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո դեպի Խորհրդային Հայաստան տեղի ունեցած հայրենադարձությանը: Սույն թեմայի ուսումնասիրությունը հատկապես կարևորվում է այն առումով, որ կատարվել է Հայաստանում պատմագիտական ուսումնասիրությունների համեմատաբար նոր ուղղության՝ առօրեականության պատմության ուսումնասիրության դիրքերից: Հետազոտությունը թույլ է տալիս ավելի առարկայական հասկանալ հայրենադարձության խնդիրները, պարզ անհատների փորձառության տեսանկյունից նորովի հայացք նետել 20-րդ դարի թե՛ ընդգրկման ծավալով և թե՛ մարդկանց թվաքանակով ամենամեծը որակված հայրենադարձությանը: Առօրեականության պատմությանը բնորոշ պատմագիտական նոր մոտեցումներով շարադրված սույն ուսումնասիրությունը թույլ է տալիս հասկանալ տվյալ ժամանակաշրջանի ոգին, բացահայտել այն իրողություններն ու գործընթացները, որոնք սույն հիմնախնդրի պատմագիտական ավանդական շարադրանքի ընթացքում նախկինում չեն կարևորվել:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է Խորհրդային Հայաստանի առօրեականության պատմության համատեքստում լուսաբանել 1946-1948 թթ. Խորհրդային Հայաստանում հաստատված հայրենադարձների առօրյան: Այդ նպատակով մեր առջև դրել ենք հետևյալ հիմնական խնդիրները.

- Ներկայացնել Խորհրդային Հայաստանի հետպատերազմյան իրականությունը՝ շեշտադրելով սույն ժամանակահատվածում բնակչության առօրյայի առանձնահատկությունները,
- Ներկայացնել հայրենադարձվելուց առաջ սփյուռքահայերի ընկալումներն ու

պատկերացումները Խորհրդային Հայաստանի վերաբերյալ,

- Վերհանել այն խնդիրներն ու դժվարությունները, որոնց բախվեցին հայրենադարձները Խորհրդային Հայաստան ժամանելուց հետո, նրանց ինտեգրման դժվարությունները,
- Բացահայտել հայրենադարձների հարցում պետության իրականացրած քաղաքականության դրդապատճառները, պետություն-հայրենադարձներ հարաբերությունները,
- Բացահայտել տեղացի-հայրենադարձ հարաբերությունների առանձնահատկությունները,
- Կարևորել հայրենադարձների ներդրումը Խորհրդային Հայաստանի հետագա զարգացման գործում:

Ժամանակագրական ընդգրկումը: Ատենախոսությունը ժամանակագրորեն ընդգրկում է 1946-1953 թթ.: Այսինքն՝ Հայրենական պատերազմի ավարտից մինչև ԽՍՀՄ առաջնորդ Ի. Ստալինի մահը, որով ավարտվեց ԽՍՀՄ պատմության առանցքային փուլերից մեկը:

Գիտական նորույթն ու գործնական նշանակությունը: 1946-1948 թթ. «Մեծ հայրենադարձության» մասին գրվել են բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ: Այդ աշխատանքների շարքում մեր հետազոտությունը առանձնանում է նրանով, որ այն իրականացվել է առօրեականության պատմության ուսումնասիրության համատեքստում: Գիտական շրջանառության մեջ դնելով բազմաթիվ նոր և արժեքավոր արխիվային փաստաթղթեր ու նյութեր, անցկացնելով բանավոր հարցազրույցներ, ատենախոսությունում նորովի հայացք է նետվել Խորհրդային Հայաստանի հետպատերազմյան իրականության կարևորագույն հիմնախնդիրներից մեկի՝ հայրենադարձության պատմության վրա: Սույն հետազոտությունն ունի գործնական նշանակություն և կարող է օգտակար լինել ներկայումս հայրենադարձների հետ տարվող աշխատանքի, նրանց հոգեբանությունը ճիշտ հասկանալու և տեղացի-հայրենադարձ հարաբերություններն արդյունավետ կառուցելու նպատակով:

Աղբյուրագիտական հիմքը և ուսումնասիրվածության աստիճանը: Խորհրդային Հայաստան եկած հայրենադարձների վերաբերյալ արժեքավոր փաստաթղթեր են պահվում Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) ֆոնդերում: Հատկապես կարևոր են ֆ. 1-ում (Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտե), ֆ. 113-ում (ՀՀ Կառավարություն), ֆ. 116-ում (ՀԽՍՀ Ներքին գործերի նախարարություն), ֆ. 12-ում (ՀԿ(բ)Կ Շամշադինի շրջկոմ), ֆ. 1230-ում (ՀԿ(բ)Կ Արարատի շրջկոմ), ֆ. 46-ում (ՀԿ(բ)Կ Լենինականի քաղաքային կոմիտե), ֆ. 75-ում (ՀԿ(բ)Կ Իջևանի շրջանային կոմիտե), ֆ. 157-ում (ՀԿ(բ)Կ Երևանի քաղաքային կոմիտե) և ֆ. 823-ում (ՀՀ կառավարությանն առընթեր կրոնի գործերի պետական խորհուրդ) պահվող արխիվային փաստաթղթերը: Դրանցում պահվում են ինչպես թեմային առնչվող պաշտոնական փաստաթղթեր՝ նիստերի արձանագրություններ,

հաշվետվություններ, հրամաններ, որոշումներ, կարգադրություններ, այնպես էլ իրավիճակը բազմակողմանի ներկայացնող զեկուցագրեր և անձնական բնույթի նամակներ՝ ուղղված կուսակցական և պետական մարմիններին:

Առանձնակի արժեք և կարևորություն են ներկայացնում հայրենադարձների անձնական բնույթի հուշագրությունները: Դրանք հնարավորություն են տալիս կարծես ականատեսի աչքերով նայել դեպքերին և իրադարձություններին, ներթափանցել հայրենադարձի մտքերի մեջ և խնդիրները տեսնել նրա աչքերով: Այնուամենայնիվ, հաշվի ենք առել այն փաստը, որ դրանք անձնական բնույթի են և «գիտական զտում» չեն անցել: Հետազոտությունը շարադրելիս հիմնականում օգտվել ենք Ս. Պալյանի[1], Ս. Բուրսալյանի[2], Ա. Կալենցի[3], Հ. Ճղլյանի[4], Ս.-Մ. Մարիկյանի[5], Ա. Աճեմյանի[6], Դ. Դավթյանի[7], Մ. Վարդանյանի[8], Վ. Կարապետյանի[9], Ս. Մղրպլյանի[10] հուշերից և Մ. Բազարյանի նամականուց[11]:

Աշխատանքը շարադրելու համար հատկապես արժեքավոր են եղել մեր անցկացրած բանավոր հարցազրույցները: Դրանք անցկացվել են ինչպես հայաստանցիների, այնպես էլ հայրենադարձների հետ: Դա մեզ թույլ է տվել ականատեսից, առաջին դեմքով լսել սովորական անհատների պատմությունները և պատմությանն ու տվյալ ժամանակահատվածի իրադարձություններին մոտենալ միանգամայն այլ դիտանկյունից:

Մեր ուսումնասիրության համար անգնահատելի աղբյուր է հանդիսացել նաև «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի աջակցությամբ «Ֆակտում» հասարակական կազմակերպության ու «Վերսուս» ստուդիայի կողմից ստեղծված վեբկայքը[12]: Այն անձնական ապրումների, հիշողությունների և արխիվային փաստաթղթերի շտեմարան է, որը հնարավորություն է տալիս համակողմանի ծանոթանալ «Մեծ Հայրենադարձությանը» և ազատորեն օգտվելու մինչ այս անհայտ, չհրապարակված տեղեկատվությունից:

---

[1] Պալեան Ս., Յուշեր ստալինեան օրերից, Լոս Անճելըս, 1988:
[2] Բուրսալյան Ս., Ամորձատված սերունդ, Լոս Անճելըս, 1993:
[3] Կալենց Ա., Ներիր ինձ Հարություն, Երևան, 1997:
[4] Ճղլյան Հ., Զսպված ըմբոստության ուշացած խոստովանանք, Երևան, 1994:
[5] Մարիկյան Մ.-Մ., Հույսը զորավիգ, ընտանեկան ճակատագիր, Երևան, 2011:
[6] Աճեմյան Ա., Ստեղծագործական ուղին և հուշեր կյանքից, 2016, https://issuu.com/factumdoc/docs/armen_ajemian?utm_medium=referral&utm_source=hayrenadardz.org (վերջին մուտք՝ 07.03.2025):
[7] Դավթյան Դ., Չխամրող հուշեր, Լոս Անջելես, 2007:
[8] Վարդանյան Մ., Խորտակված երազների արահետներով, Լոս Անջելես, 1992:
[9] Կարապետյան Վ., Կամքը, որ հայինն է, Երևան, 2011:
[10] Meghreblian S., An Armenian Odyssey, London, 2012.
[11] Բազարյան Մ., Նամակներ սովետական «դրախտից» (ներգաղթի և ներգաղթողների մասին), Երևան, 1996:
[12] https://hayrenadardz.org/hy/page/about-us (վերջին մուտք՝ 10.03.2025):

Մեծաքանակ և կարևորագույն նյութ է պարունակում նաև խորհրդահայ և սփյուռքահայ մամուլը[13]: Պարբերականներում տպագրված տեղեկությունները (վերլուծականներ, խմբագրականներ, տեղեկատու տեքստեր, հրատարակված նամակներ, զանազան գրություններ և այլն) շատ կարևոր են խորհրդահայ կյանքի առօրյան վերականգնելու, հայրենադարձների կենցաղն ուսումնասիրելու տեսանկյունից: Սակայն պետք է նշել, որ մամուլի հրապարակումներին մոտեցել ենք բավական զգույշ, քանի որ այնտեղ տպագրված նյութերը իրարամերժ են և մեծ մասամբ ունեն ընդգծված քաղաքական ու կուսակցական ուղղվածություն:

Խորհրդային տարիներին տեղի ունեցած հայրենադարձությունն ուսումնասիրելու համար առաջնային կարևորություն ունեն խորհրդահայ պատմաբան Հ. Մելիքսեթյանի ուսումնասիրությունները: Պատմաբանը մենագրություններից մեկում, ներկայացնում է հայրենադարձության առաջին փուլի ամփոփ պատմությունը[14], իսկ մյուսը[15] խորհրդային տարիներին զանգվածային հայրենադարձության փուլերի ամբողջական պատմության շարադրման առաջին փորձն է: Նյութը շարադրելիս վերջին աշխատանքն օգտակար է եղել մեզ համար:

Ատենախոսության շարադրման համար մեծ կարևորություն են ունեցել Հայաստանի անկախության շրջանում հրատարակված ուսումնասիրությունները: Ա. Վիրաբյանն իր «Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով» աշխատությունում[16] մեծ բաժին է հատկացրել հայրենադարձությանը: Նա արխիվային հարուստ փաստաթղթերի հիման վրա ներկայացրել է խնդիրը՝ ընդգծելով հայրենադարձության ընթացքում խորհրդային իշխանությունների թույլ տված բացթողումները: Սույն աշխատանքը կարևոր է նաև հետպատերազմյան առաջին տարիների խորհրդահայ իրականության վերաբերյալ պատկերացում կազմելու առումով: Մեծ կարևորություն ունեցած հաջորդ աշխատանքը Ա. Ստեփանյանի մենագրությունն է: Լինելով հայրենադարձի զավակ, հեղինակը հայրենադարձության խնդրին մոտեցել է տարբեր տեսանկյուններից: Մենագրությունում առկա է մեծաքանակ ազգագրական նյութ, որը որպես սկզբնաղբյուր բացառիկ կարևորություն է ստանում՝ հայրենադարձների խնդիրները պատկերավոր ըմբռնելու և հասկանալու առումով: Աշխատանքում ներկայացված են ներգաղթածների ինտեգրման խնդիրները, տեղացիների հետ

---

[13] «Սովետական Հայաստան» ամսագիր (1946-1954 թթ.), «Ավանգարդ» (1946-1954 թթ.), «Հայրենիք» (1946-1954 թթ.), «Երիտասարդ Հայաստան» (1946-1954 թթ.), «Էջմիածին» (1946-1954 թթ.), «Սովետական Հայաստան» թերթ, (1946-1954 թթ.), «Ձարթոնք» (1946-1954 թթ.) և այլն:

[14] Մելիքսեթյան Հ., Արևմտահայության բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան (1915-1940), Երևան, 1975:

[15] Մելիքսեթյան Հ., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980 թթ.), Երևան, 1985:

[16] Վիրաբյան Ա., Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով, Երևան, 2001:

ունեցած կենցաղամշակութային տարբերությունները և բազմաթիվ այլ հարցեր[17]: Հիմնախնդրի քաղաքական պատմության շարադրման համար հատկապես օգտակար է եղել Ն. Սարգսյանի աշխատությունը: Հեղինակը համակողմիանի ներկայացրել է «Մեծ Հայրենադարձությունը»՝ սկսելով համայնքներում հայության ներկայությունից, այնտեղ գոյություն ունեցող խնդիրներից, հասցնելով ընդհուպ մինչև Խորհրդային Հայաստանում հայրենադարձների տեղավորման, ինտեգրման և սոցիալ-տնտեսական իրավիճակի քննարկում[18]: Շարադրման համար օգտակար է եղել նաև Ա. Մանուկյանի մենագրությունը, որտեղ ներկայացված է Հայաստանում ստալինյան բռնաճնշումների ընդհանուր պատկերը[19]:

Ատենախոսության շարադրանքի ընթացքում օգտագործել ենք բազմաթիվ արժեքավոր գիտական հոդվածներ: Դրանցից ցանկանում ենք առանձնացնել հայրենադարձության տերմինաբանությանը նվիրված Է. Մելքոնյանի և Լ. Գևորգյանի հոդվածները[20], ինչպես նաև հայրենադարձների՝ ԽՍՀՄ պետական սահմանը խախտելու և փախուստի խնդրին վերաբերվող Կ. Խաչատրյանի հոդվածը[21]:

Խորհրդային Հայաստանի հետպատերազմյան շրջանի խնդիրները հասկանալու համար օգտակար են եղել և՛ խորհրդային[22], և՛ անկախության[23] տարիներին Հայաստանում գրված աշխատանքները: Դրանք հնարավորություն են տալիս ավելի խորը հասկանալու հետպատերազմյան Խորհրդային Հայաստանը, նրա խնդիրները, ստեղծված սոցիալ-տնտեսական դրությունը, իրավիճակից դուրս գալու նպատակով

---

[17] Ստեփանյան Ա., XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Երևան, 2010:

[18] Սարգսյան Ն., Սփյուռքահայերի 1946-1948 թթ. մեծ հայրենադարձը, Երևան, 2014:

[19] Մանուկյան Ա., Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953 թթ., Երևան, 1999:

[20] Մելքոնյան Է., Ներգաղթ, հայրենադարձություն դիսկուրսիվ տերմինաբանությունը Հայաստան-սփյուռք հարաբերություններում, «Հայ գաղթականությունը և հայրենիք-սփյուռք կապերը 1918-1985 թթ., միջազգային գիտաժողովի զեկուցումներ», Երևան, 2011, Գևորգյան Լ., Սփյուռքահայության ներգաղթի իրավական կարգավորման հիմնախնդիրը «Մեծ հայրենադարձության» և միջազգային փորձի համատեքստում, «ՎԷմ», 2013, N 4:

[21] Խաչատրյան Կ., Հայրենադարձ հայերի սահմանախախտումների խնդիրը «մեծ հայրենադարձության» տարիներին (1946–1948 թթ.), «Խորհրդային Հայաստանի առօրյա կյանքի «սպիտակ էջերը» (1940-1960-ական թվականներ), հոդվածների ժողովածու», Երևան, 2020:

[22] Խարմանդարյան Ս., Սովետական Հայաստանը չորրորդ հնգամյակի տարիներին (1946-1950), Երևան, 1960, Գեղամյան Գ., Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը սոցիալիզմի վերջնական հաղթանակի ժամանակաշրջանում, Երևան, 1968:

[23] «Նորատուս»: Նորատուս գյուղի պատմությունը, Երևան, 2000, Հարությունյան Վլ., Ավագյան Գ., Քաջարան (Քաջարան քաղաքի պատմությունը), Երևան, 2004, Կոխլիկյան Ա., Սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայկական ԽՍՀ գյուղում 1945-1965 թթ., պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2006, Ասատրյան Մ., Արծվանիստ, Երևան, 2006, Մանուկյան Գ., Օհանյան Հ., Ավշար, Երևան, 2007, Ափուջանյան Ֆ., Արևաշող, Երևան, 2009, Սուքիասյան Հ., Երրորդ գյուղից մինչև Երևանի Սիլիկյան թաղամաս, Երևան, 2012, Սուքիասյան Հ., Ղարագյոզյան Ա., Գառնի (հին ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2023:

իշխանությունների ձեռնարկված քայլերը, հետպատերազմյան իրականությունը և բնակչության առօրյա կյանքն ու նրանց հուզող հարցերը:

Ատենախոսության շարադրմանը մեծապես օգնել է նաև Գ. Ժամհարյանի սոցիալական և առօրեականության պատմության մի շարք հիմնահարցերին նվիրված աշխատությունը[24]: Հայ պատմագիտության մեջ առաջին անգամ հետազոտական առաջնահերթություն դարձնելով առօրեականության պատմությունը՝ հեղինակը դիտարկել է պատմագիտական այս ուղղության զարգացման հեռանկարները:

Ատենախոսության մեթոդաբանությունը: Հետազոտության համար օգտագործվել են բազմաթիվ անձնական ծագման աղբյուրներ՝ հուշագրություններ, անձնական հիշողություններ, նամակներ, հետևաբար, հետազոտության մեթոդաբանական գործիքակազմը բազմազան է և հիմնված եվրոպացի և ռուս հետազոտողների կողմից շրջանառված առօրեականության պատմության ուսումնասիրման մեթոդաբանական մոտեցումների վրա: Հատկապես կիրառել ենք Ն. Պուշկարյովայի նկարագրած՝ «աղբյուրի հետ երկխոսության» մեթոդաբանական մոտեցումը: Այն ընդլայնում է աղբյուրների ըմբռնումը՝ կենտրոնանալով ոչ թե դրանց հատուկ տեսակի, այլ մարդկային գործունեության ներքին դրդապատճառները փոխանցելու և անհատների սոցիալական փորձառությունը նկարագրելու ունակության վրա: Կիրառվել են նաև բանավոր պատմության հետազոտության մեթոդները: Վերջինը կարևոր տեղ է զբաղեցնում ուսումնասիրության մեջ: Պատմական փաստերն ու իրողություններն աշխատանքում քննվել են նաև պատմաքննական, պատմահամեմատական և գիտական օբյեկտիվության մեթոդների կիրառմամբ:

Ուսումնասիրության փորձաքննությունը: Ատենախոսության հիմնադրույթները փորձաքննություն են անցել ՀՀ-ում կազմակերպված միջազգային և հանրապետական գիտական նստաշրջաններում և գիտաժողովներում: Աշխատանքը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի կողմից:

Աշխատանքի կառուցվածքն ու հիմնական բովանդակությունը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, որոնցից երկուսն իրենց հերթին բաղկացած են ենթագլուխներից, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից:

Ներածության մեջ ամփոփ ներկայացված են ատենախոսության ընդհանուր բնութագիրը, թեմայի արդիականությունը, ուսումնասիրության նպատակը և խնդիրները, ժամանակագրական ընդգրկումը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, աշխատանքի մեթոդաբանությունը, աղբյուրագիտա-
կան հիմքը և թեմայի ուսումնասիրվածության աստիճանը:

---

[24] Ժամհարյան Գ., Հայաստանի խորհրդային ժամանակաշրջանի առօրեականության պատմության դրվագներ (1920-1930-ական թվականներ), Երևան, 2019:

Ատենախոսության առաջին գլուխը վերնագրված է՝ ***«Խորհրդային Հայաստանի հետպատերազմյան տարիների առօրյայի առանձնահատկությունները»***: Այս գլխում ներկայացվում է Խորհրդային Հայաստանի հետպատերազմյան իրականությունը, առաջ եկած խնդիրները, ցույց է տրվում գյուղական և քաղաքային միջավայրերում ապրողների առօրյայի առանձնահատկությունները, վեր են հանվում պաշտոնեական դիրքով պայմանավորված չարաշահումները: Մասնավորապես անդրադարձ է կատարված իրավապահ մարմինների գործունեությանը, ընդգծվում են պատերազմի հետևանքով համակարգում առկա խնդիրները: Խոսվում է բնակչության սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական վիճակի մասին: Անդրադարձ է կատարված հետպատերազմյան իրականությունը ձևավորող կառույցներից մեկի՝ Հայ Առաքելական եկեղեցու գործունեությանը, ընդգծվում են այն խնդիրները, որոնց բախվում էր հոգևորականությունը առօրյա գործունեության ընթացքում: Ընդհանուր առմամբ, ներկայացված է այն իրականությունը, որին բախվելու էին հայրենադարձները հանրապետություն ոտք դնելուց անմիջապես հետո:

Երկրորդ գլուխն ունի ***«Խորհրդային Հայաստանում հայրենադարձների հաստատումը և ինտեգրման խնդիրները»*** խորագիրը և կազմված է հինգ ենթագլխից: Սույն գլխում ներկայացված է մինչև Հայաստան գալը հայրենադարձների ընկալումներն ու պատկերացումները խորհրդային պետության և խորհրդային իրականության մասին: Նկարագրված է նրանց ժամանման և տեղավորման գործընթացը, ներգաղթյալների առաջին պատկերացումները Խորհրդային Հայաստանի վերաբերյալ: Խոսվում է առաջ եկած խնդիրների վերաբերյալ՝ տեղավորման գործընթացի հետևանքով առաջ եկած հարցերից ընդհուպ մինչև գաղափարական-քաղաքական հիմնախնդիրներ: Նկարագրվում է հայրենադարձների փախուստի փորձերը, վեր են հանվում դրանց պատճառները: Խոսվում է 1949 թ. բռնաքսորի և դրա հետևանքով երկրում ստեղված մթնոլորտի մասին:

Երրորդ գլուխը՝ ***«Խորհրդային իրականությանը հայրենադարձների ներգրավման գործընթացը»,*** բաղկացած է երեք ենթագլխից: Այստեղ ներկայացված են տեղացի-հայրենադարձ հարաբերությունները, ընդգծվում են նրանց միջև եղած մտածողության, ապրելակերպի, մշակութային, լեզվական տարբերությունները: Նկարագրվում են խորհրդային տոները, ընդգծվում դրանց կարևորությունը բնակչության առօրյա կյանքում և կարևորվում դրանց հոգեբանական ազդեցությունը հայրենադարձների խորհրդային իրականությանը հարմարվելու առումով: Ինչպես նաև կարևորվում է Խորհրդային Հայաստանի պետական-կուսակցական և կրթամշակութային կյանքին հայրենադարձների ներգրավվածությունը:

Եզրակացություններ: Խորհրդային Հայաստանի հետպատերազմյան առօրյան ձևավորվեց Հայրենական մեծ պատերազմի հետևանքների ազդեցությամբ: Հետևաբար, խորհրդային երկիր ժամանած հայրենադարձները տեսան մի պետություն, որը բախվել էր լուրջ տնտեսական և սոցիալական խնդիրների: Քայքայվել էին

տնտեսության հիմնական ճյուղերը՝ արդյունաբերությունը և, հատկապես, գյուղատնտեսությունը: Գրեթե բոլոր բնագավառներում առկա էին խնդիրներ ու թերություններ: Մասնավորապես գյուղական բնակչությունն ապրում էր ծայրահեղ աղքատության մեջ: Երկրում տիրում էր սով, մոլեգնում էին հիվանդությունները: Բացակայում էին հիգիենայի տարրական պայմանները: Իսկ հոգեբանական առումով հայրենադարձները հանդիպելու և շփվելու էին այնպիսի մարդկանց հետ, ովքեր իրենց առօրյայում անցնում էին բարդ և դժվարին փուլերով: Ճիշտ է, հայաստանցիներն իրենց ընկալում էին իբրև հաղթանակած խորհրդային երկրի քաղաքացիներ, ու դա շատ դեպքերում նրանց ավելի լավ ու բարեկեցիկ ապագայի վստահություն և հույս էր տալիս, սակայն բնակչությունը գտնվում էր հետպատերազմյան սթրեսների ազդեցության տակ ու շատ դեպքերում նրանց վարքն ու գործունեությունը պայմանավորված էր հենց այդ հանգամանքներով: Նշվածին ավելանում էր պետական ու հանրային ունեցվածքի մեծ չափերի հասած չարաշահումները, յուրացումներն ու հափշտակումները:

Թվում էր, թե, այս ամենի հետ մեկտեղ, հասարակական կարգը պահպանող իրավապահ մարմինների ներկայացուցիչները պետք է ծառայություն իրականացնեին խիստ վերահսկողական ռեժիմով, որը շատ կարևոր էր նաև հայրենադարձների համար: Սակայն պատերազմը թուլացրել էր նաև վերահսկողական մարմինների գործունեության օղակները: Հետևաբար, բացասական երևույթները չշրջանցեցին նաև իրավապահ մարմիններին: Չարաշահումներ կատարում էին նաև միլիցիայի բարձրաստիճան պաշտոնյաները, որը բացասաբար էր ազդում համակարգի վրա: Խորհրդային Հայաստանի հետպատերազմյան իրականությունը ձևավորողներից էին նաև հոգևոր դասի ներկայացուցիչները: Պատերազմի վերջնափուլում տեղի էր ունեցել բեկում պետություն-եկեղեցի հարաբերություններում, եկեղեցուն տրվել էր գործելու որոշակի ազատություն: Երկար ժամանակ լիարժեք գործունեություն չծավալած կառույցը կանգնեց լուրջ խնդիրների առջև: Այնուամենայնիվ, հոգևորականությունը՝ ի դեմս կաթողիկոս Գևորգ Զ Չորեքչյանի, կարողացավ լուծում տալ ամենակարևոր խնդրին՝ հոգևոր ճեմարանի բացմանը և նոր կադրերի պատրաստմանը: Բացի այդ, նկատվեց նաև դրական միտում. հոգևոր վերազարթոնք, որը կարևոր էր Խորհրդային Հայաստան ժամանող ներգաղթյալների հոգևոր կյանքի կառուցման տեսակետից:

Եթե մինչև 1945 թ. աշխարհով մեկ սփռված հայության մոտ խորհրդային երկրի, մասնավորապես Խորհրդային Հայաստանի մասին պատկերացումները սահմանափակվում էին նրանով, որ այդ երկիրը ԽՍՀՄ կազմում ներգրավված է ֆաշիզմի դեմ պայքարում, կամ էլ սփյուռքյան քաղաքական գործիչների և մտավորականների մատուցած մեծ մասամբ քննադատական ընկալումներով ու պատկերացումներով, ապա հետպատերազմյան իրականությունը փոխեց իրավիճակը: Առաջ եկան մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքներ, որոնք էլ ձևավորեցին սփյուռքահայության նոր ընկալումներն ու պատկերացումները Խորհրդային Հայաստանի մասին: Նրանք Խորհրդային Հայաստանը ընկալեցին յուրովի. որոշների

համար այն դարձավ վերագտած հայրենիք, որոշների համար՝ ապահով ապրելավայր, որոշների համար էլ՝ իրենց նպատակների և նվիրական երազանքների կատարման վայր, իսկ ոմանք այն ընկալեցին ժամանակավոր կացարան՝ Հայոց ցեղասպանության հետևանքով կորսված իրենց բնիկ հողատարածքը (Արևմտյան Հայաստան) վերադառնալու ճանապարհին: Սակայն այստեղ կենտրոնականն ու գլխավորն այն էր, որ առաջ եկան պատկերացումներ՝ հայրենիքը՝ Խորհրդային Հայաստանի տեսքով վերագտնելու վերաբերյալ: Դա էլ, իր հերթին, հանգեցրեց պատմական հայրենիքի, ծննդավայրի ու ապրելավայրի մասին նոր ընկալումների ձևավորմանն ու կարծիքների երկփեղկվածությանը: Այս ամենն էլ պատճառ դարձավ, որ մերթ ընդ մերթ քննարկումներ ծավալվեն «հայրենադարձություն» և «ներգաղթ» եզրույթների առնչությամբ:

Չնայած այն հանգամանքին, որ արտասահմանի հայության ընդունումն ու տեղավորումը չափազանց կարևոր իրադարձություն էր Խորհրդային Հայաստանի կյանքում և հանդիսանում էր կուսակցական, պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների առաջնահերթությունը, այնուամենայնիվ այդ աշխատանքների ընթացքում թույլ տրվեցին բազմաթիվ թերություններ, որոնք պայմանավորված էին հետապատերազմյան շրջանում Խորհրդային Հայաստանում տիրող իրավիճակով: Ճիշտ է, հայաստանյան իշխանությունների որոշ շրջանակ պատկերացնում էր առկա խնդիրները և փորձում էր հաշվի առնել իրական հնարավորությունները, սակայն ներգաղթի չնախատեսված ծավալները, ինչպես նաև կազմակերպիչների՝ իրենց աշխատանքում թերացումը հանգեցրին նրան, որ մեծ շփոթ առաջացավ: Ստեղծված քաոսային վիճակը, առաջացած «հացի խնդիրը» և բացասական բարոյահոգեբանական մթնոլորտը հանգեցրին նրան, որ ներգաղթյալները հայտնվեցին հոգեբանական ծանր և դեպրեսիվ վիճակում: Նրանք բախվեցին հայաստանյան միջավայրի հետ, որը նրանց համար անհասկանալի էր և շոկային:

Որքան էլ պետությունը փորձում էր ներգաղթյալների ինտեգրման դժվարություններն արագ հաղթահարելու նպատակով վերահսկողություն սահմանել, այնուամենայնիվ պետական կառավարման ապարատը թուլացել էր: Տեղական ղեկավար մարմինները սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակի պայմաններում ստիպված էին լուծել ոչ միայն ներգաղթյալների խնդիրները, այլև պատերազմի հետևանքով տեղացի բնակչության առջև ծառացած բազմաթիվ այլ հարցեր: Դրանց ավելանում էր նաև տեղացիների ընդհանուր կրթվածության և զարգացվածության ֆոնին ներգաղթյալների հանդեպ ցուցաբերված կոպիտ վերաբերմունքը, որն ավելի էր բարդացնում իրավիճակը: Այդուհանդերձ, պետք է արձանագրել, որ ինտեգրման խնդիրն էլ ավելի էին բարդացնում նաև հայրենադարձներից ոմանք, ովքեր, հայտնվելով հայաստանյան տարբեր միջավայրերում, հատկապես գյուղական բնակավայրերում, իրավիճակը գնահատում էին որպես ծայրահեղ ծանր ու չէին

փորձում ինքնուրույն քայլեր ձեռնարկել կամ օգնել տեղական ղեկավարությանը իրավիճակից դուրս գալու նպատակով: Ինտեգրումը դժվարացնում էին նաև պետական հիմնարկներում, տարբեր հաստատություններում, գյուղական վարչություններում ներգաղթյալների հետ աշխատող մեծ և փոքր պաշտոնյաները, ովքեր չունեին համապատասխան աշխատանքային փորձ ու կրթվածություն, ինչպես նաև չէին տիրապետում հայրենադարձների հետ վարվեցողության կանոններին: Ուստի՝ գնահատական տալով իրավիճակին, կարող ենք փաստել, որ պետության իրականացրած քայլերը բավականին շատ էին, սակայն, պայմանավորված Խորհրդային Հայաստանի սոցիալ-տնտեսական անմխիթար իրավիճակով, ընդհանուր կրթական մակարդակով, գաղափարական դաստիարակությամբ և կապանքներով, տեղական ղեկավարության ներկայացուցիչների և հայրենադարձների միջև հարաբերությունները կառուցվում էին շատ դեպքերում ոչ ճիշտ, ինչն էլ բերում էր խնդիրների՝ ձևավորելով անառողջ մթնոլորտ:

Տեղացիների և հայրենադարձների միջև հարաբերությունները բավական բարդ էին և բազմաշերտ: Խորհրդային Հայաստան ոտք դնելուց անմիջապես հետո, ընդհանուր ոգևորության ֆոնին, ի հայտ եկան բազմաթիվ տարբերություններ, որոնք էլ առաջացրին լարվածություն: Տեղացիներն ու հայրենադարձները հաճախ միմյանց ընկալում էին որպես տարբեր խմբեր: Հայաստանցիները դաստիարակվել էին խորհրդային գաղափարական ազդեցությամբ, նրանց ապրելակերպը, մտածողությունը, կյանքի նկատմամբ վերաբերմունքը համահունչ էին խորհրդային հասարակարգին: Իսկ հայրենադարձները գալիս էին աշխարհի տարբեր երկրներից, նրանք մշակութային առումով խայտաբղետ էին, ունեին լեզվական առանձնահատկություններ, կենցաղային սովորություններ, կյանքի, կրոնական, քաղաքական և տնտեսական ազատության և մի շարք այլ հարցերի վերաբերյալ ուրույն, տեղացիներից տարբերվող պատկերացումներ, ուստի նրանց միջև գաղափարական բախումն անխուսափելի էր:

Հայրենադարձների մեծ հոսքը առանց այն էլ սոցիալ-տնտեսական ծանր վիճակում գտնվող Հայկական ԽՍՀ բնակչության վիճակն ավելի ծանրացրեց: Խորհրդային Հայաստանի բնակչությունը ևս կրել էր պատերազմի ողջ ծանրությունը՝ ոչ միայն Կարմիր բանակին նյութական օժանդակություն ցուցաբերելով, այլ նաև մարդկային ներուժով: Ուստի պետությունից սպասում էր իր կատարած զոհողությունների դիմաց փոխհատուցում՝ առաջին հերթին սոցիալական իրավիճակի բարելավում: Սակայն հայրենադարձների գալով պայմանավորված՝ պետական կառույցների ուշադրության ծանության կենտրոնը որոշակիորեն տեղափոխվեց նրանց ուղղությամբ: Փաստորեն, տեղացիները ստիպված էին ոչ միայն համակերպվել իրենց անմխիթար դրության հետ, այլև օժանդակել ներգաղթյալներին, որը նույնպես լարվածություն էր առաջացնում:

Խորհրդային իշխանության ներկայացուցիչների կողմից ներգաղթյալների

նկատմամբ կասկածամտությունը և կոպիտ վերաբերմունքը երբեմն տեղացիներին ևս ստիպում էր ցուցաբերել զգուշավորություն, որը շատ դեպքերում արհեստական խոչընդոտներ էր ստեղծում նրանց հարաբերություններում: Հայրենադարձներին դժվարությամբ էին ընդունում կոմկուսի շարքերը, պատասխանատու պաշտոնների նշանակելու հարցում զգուշավորություն դրսևորում: Ուստի ստալինյան ռեժիմի պայմաններում ապրող հայաստանցիները երբեմն խույս էին տալիս հայրենիք վերադարձած ազգակիցների հետ շփումներից՝ վախենալով, որ դա կարող է վտանգավոր լինել: Թեև տեղացիների և հայրենադարձների հարաբերությունները բավականին բարդ էին, այնուամենայնիվ ժամանակի ընթացքում տեղի ունեցավ բնական համակեցություն, որը ձևավորեց հետագա սերունդների միասնական հայկական ինքնությունը:

Վերոհիշյալ խնդիրները հայրենադարձների որոշակի շրջանակներում հանգեցրեցին հիասթափության և դժգոհության, ինչը արտահայտվեց Խորհրդային Հայաստանից փախչելու տրամադրվածություններով: Փաստերի համադրումից տեսնում ենք, որ ներգաղթյալները փախուստի փորձեր են կատարել՝ հիմնական շարժառիթ ունենալով երկրի սոցիալ-տնտեսական բարդ ու ծանր վիճակը: Ընդհանուր առմամբ, ճիշտ է, փախուստի դեպքերը զանգվածային բնույթ չկրեցին, սակայն դրանք դարձան հայրենադարձության քաղաքականության բացթողումներից մեկը:

Առկա բազմաթիվ խնդիրներին զուգահեռ՝ հայրենադարձների մի մասը տեղացիների հետ ճաշակեցին նաև խորհրդային ամբողջատիրական քաղաքականության ծայրագույն դրսևորումներից մեկը՝ 1949 թ. աքսորը: Այս իրավիճակը բացասաբար ազդեց առանց այն էլ բարդ հոգեվիճակում գտնվող հայրենադարձների վրա: Սակայն խնդիրն ուներ նաև մեկ այլ կողմ. եթե մինչև աքսորը նրանք փորձում էին փախուստի միջոցով կամ այլ տարբերակներով ելքեր որոնել երկրից դուրս գալու նպատակով, ապա աքսորը եկավ նրանցից որոշներին մեկ անգամ ևս համոզելու, որ հայտնվել են մի իրականությունում, որտեղ պետք է պայքարել ապրելու, իրենը ստեղծելու և կայանալու համար:

Հայրենադարձները մասնակցում էին նաև Խորհրդային Հայաստանի բնակչության առօրյա կյանքի կարևոր մասը կազմող խորհրդային տոներին: Տոները հոգեբանական խորը ազդեցություն էին թողնում նրանց վրա: Քաղաքացիները հավատում էին, որ իրենք կարևորի մաս են կազմում և դա երբեմն օգնում էր չտեսնել համակարգի ստեղծած դժվարությունները: Գաղափարական դաստիարակությունից առավել, կարող ենք փաստել, որ տոները ապահովում էին խորհրդահայ բնակչության ուրախ առօրյան, որն առանձնապես դուր էր գալիս առանց այն էլ բարդ հոգեբանական իրավիճակում գտնվող ներգաղթյալներին և հնարավորություն ընձեռում ավելի անկաշկանդ ու բաց միջավայրում խոսել ու ավելի մոտիկից ծանոթանալ հայաստանցիների հետ:

Խորհրդային Հայաստանի զարգացման գործում հայրենադարձների ներդրումը

չափազանց կարևոր և բազմաբնույթ էր: Նրանք իրենց գիտելիքներով, հմտություններով նպաստեցին երկրի տնտեսության, կրթության, գիտության, մշակույթի և այլ ոլորտների զարգացմանը: Հայրենադարձ գիտնականները նպաստեցին Խորհրդային Հայաստանի գիտական հաստատությունների զարգացմանը: Նրանցից շատերը աշխատանքի անցան Երևանի Մոլոտովի անվան պետական համալսարանում և, հատկապես, ՀԽՍՀ Գիտությունների ակադեմիայի համակարգի գիտական կազմակերպություններում: Հայրենադարձները հարստացրեցին Հայաստանի մշակութային կյանքը. գրողները, նկարիչները, երաժիշտներն ու դերասանները բերեցին նոր ոճ, նոր հոսանքներ, նոր արտահայտչամիջոցներ՝ բազմազանություն մտցնելով Խորհրդային Հայաստանի միապաղաղ առօրյայում և կենցաղում:

Հայրենադարձությունը կարևոր նշանակություն ունեցավ նաև ժողովրդագրական առումով: Հայրենադարձների շնորհիվ ավելացավ Հայկական ԽՍՀ բնակչության քանակը: Տեղի ունեցավ բնակչության մեխանիկական աճ, որը հետագայում ապահովեց նաև բնական աճը:

Ատենախոսության թեմայով հրատարակված աշխատանքների ցանկ

1. **Ղազարյան Գ.,** Պաշտոնեական դիրքի չարաշահումները ՀԽՍՀ միլիցիայի աշխատակիցների առօրյայում հետպատերազմյան առաջին տարիներին, «Հայոց պատմության հարցեր», 2018, N 19, էջ 132-143:
2. **Ղազարյան Գ.,** Խորհրդային Հայաստանում հայրենադարձների առօրյայի պատմությունից (1946-1948 թթ.), «Պատմաբանասիրական հանդես», 2019, N 3, էջ 120-131:
3. **Zhamharyan G., Ghazaryan G.,** The Daily Life of the Armenian Clergy (Priests) in the Post-War Years (1946–1954), «Բանբեր հայագիտության», 2023, N 3, էջ 107-114:
4. **Ղազարյան Գ.,** Խորհրդային Հայաստանը 1946-1948 թթ. հայրենադարձների պատկերացումներում, «Լրաբեր հասարակակական գիտությունների», 2024, N 2, էջ 151-161:
5. **Ղազարյան Գ., Սուքիասյան Հ.,** Վավերագիր Մեծ հայրենադարձության տարիներին Լենինականում հաստատված օտարազգիներին մասին, «Պատմաբանասիրական հանդես», 2024, N 3, էջ 232-239:
6. **Ղազարյան Գ.,** Հայրենադարձների մասնակցությունը խորհրդային տոներին հետպատերազմյան տարիներին, «Տարածաշրջան և աշխարհ», 2025, N 2, էջ 72-76:

КАЗАРЯН ГАЯНЕ ХАЧИКОВНА

РЕПАТРИАНТЫ В КОНТЕКСТЕ ПОВСЕДНЕВНОЙ ЖИЗНИ СОВЕТСКОЙ АРМЕНИИ (1946-1953 гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 «История Армении»

Защита диссертации состоится 14-го июля 2025 г. в 13^{00} на заседании специализированного совета по Истории Армении 004 КВОН РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4).

РЕЗЮМЕ

Цель диссертации – в контексте истории повседневности Советской Армении осветить повседневную жизнь репатриантов-армян, обосновавшихся в Советской Армении в результате «Большой репатриации» 1946-1948 годов.

Исследование отличается тем, что проводилось в контексте изучения истории советской повседневности. Вводя в научный оборот многочисленные архивные документы и материалы, проводя устные интервью, в диссертации по-новому рассматриваются важнейшие вопросы послевоенной действительности Советской Армении, связанные с повседневной жизнью репатриантов-армян.

Диссертация состоит из введения, трёх глав, с подглавами, заключения, списка использованных источников и литературы.

Во **введении** изложены общая характеристика диссертации, ее актуальность, цели и задачи исследования, научная новизна, практическая значимость и методология.

В **первой главе** диссертации: **«Особенности повседневной жизни Советской Армении в послевоенные годы»,** описывается послевоенная повседневная реальность Советской Армении. Представлены проблемы, возникшие

в результате войны, показаны особенности повседневной жизни жителей городской и сельской среды. Обсуждается вопрос социально-экономического и морально-психологического состояния населения республики. В целом представлена реальность, с которой пришлось столкнуться репатриантам сразу же после прибытия в Советскую Армению.

Вторая глава: «Обустройство репатриантов в Советской Армении и проблемы интеграции», состоит из пяты подглав. Здесь рассмотрены представления репатриантов о Советской стране и советской действительности до прибытия в Армению. Описывается процесс их прибытия и обустройства, а также первые представления иммигрантов о Советской Армении. Обсуждаются возникшие проблемы: от вопросов, связанных с обустройством, до идеологических и политических. В главе представлены также случаи попыток побега репатриантов заграницу, раскрываются причины этого отчаянного шага.

Третья глава: «Процесс интеграции репатриантов в советскую действительность», включает три подглавы. В главе представлены отношения местного населения и репатриантов, подчеркиваются различия в мышлении и образе жизни. Описывается и подчеркивается значение советских праздников в повседневной жизни населения, а также их психологическое воздействие на адаптацию репатриантов к советской действительности. В диссертации обсуждены также проблемы участия репатриантов в государственно-партийной и образовательно-культурной жизни Советской Армении.

В **заключении** подведены основные итоги диссертации.

GHAZARYAN GAYANE KHACHIK

THE REPATRIATES IN THE CONTEXT OF EVERYDAY LIFE IN SOVIET ARMENIA (1946–1953)

Dissertation for the degree of Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01

The Defense of the Dissertation will be held on July 14, 2025, at 13^{00} at the Session of the Specialized Council 004 on Armenian History of HESC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan ave., 24/4).

RESUME

The aim of the dissertation is to shed light on the everyday life of Armenian repatriates who settled in Soviet Armenia as a result of the "Great Repatriation" of 1946–1948, within the broader framework of the history of everyday life in Soviet Armenia.

This study is distinguished by its methodological approach, as it is conducted within the context of the history of Soviet everyday life. By incorporating a wide range of previously unpublished archival documents and materials into scholarly circulation and conducting oral history interviews, the dissertation offers a new perspective on key aspects of post-war Soviet Armenia, particularly those related to the daily experiences of Armenian repatriates.

The structure of the dissertation includes an introduction, three main chapters with subchapters, a conclusion, and a list of references and literature.

The Introduction outlines the general characteristics of the study, including its relevance, research aims and objectives, scientific novelty, practical significance, and methodology.

The first chapter of the dissertation, titled **"Peculiarities of Everyday Life in Soviet Armenia in the Post-War Years,**" explores the post-war reality of Soviet Armenia. It presents the challenges that emerged as a result of World War II and highlights the specific characteristics of daily life in both rural and urban settings. The chapter also examines the socio-economic conditions and the moral-psychological state of the population during this period. Overall, it provides a contextual foundation for understanding the challenges repatriates faced upon arrival in Soviet Armenia.

The second chapter, **"Settlement of Repatriates in Soviet Armenia and Integration Problems,"** is divided into five subchapters. It analyzes the pre-arrival perceptions and expectations of Diaspora Armenians regarding Soviet Armenia, followed by a detailed discussion of the repatriation process and the initial impressions formed upon arrival. The chapter examines the multitude of challenges faced by repatriates, ranging from housing and administrative obstacles to deeper ideological and political tensions. Particular attention is given to the repatriates' disillusionment and the emergence of emigration attempts, along with an exploration of their underlying causes.

The third chapter, titled **"The Process of Integration of Repatriates into the Soviet Reality,"** includes three subchapters. It explores the relationships between the local population and repatriates, emphasizing the differences in worldview and lifestyle. The chapter also examines the role of Soviet holidays in everyday life, underlining their significance in identity shaping and their psychological influence on the adaptation process of repatriates. Furthermore, the dissertation analyzes the challenges faced by repatriates in participating in the state-party structures as well as in the educational and cultural life of Soviet Armenia.

The conclusion of the dissertation summarizes the main findings and highlights the scholarly contributions of the study, particularly within the framework of the history of everyday life.